Մաքսային խնդիրներ

1. Մաքսային վերահսկում և ձևակերպումներ

Ներածություն

Մաքսային վերահսկողության և ձևակերպումների բնագավառում ՀՀ օրենսդրությունը միայն մասամբ է համապատասխանում ԵՄ օրենսդրությանը:

Մաքսային վերահսկողության և ձևակերպումների ոլորտը կարգավորող Եվրամիության օրենսդրությունը սահմանում է մաքսային գործի հիմնական սկզբունքները, կանոնակարգում է որոշ տեսակի զենքի ներմուծման հետ կապված մաքսային խնդիրները և այլ երկրներում գրանցված տրանսպորտային միջոցների վերահսկումը: Վերոհիշյալ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են ՀՀ մաքսային օրենսգրքով[1], «Զենքի մասին»[2] (հոդված 17), «Միջազգային պայմանագրերի մասին»[3] (հոդված 2), «Առևտրաարդյունաբերական պալատների մասին[4] (հոդված 6), «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին»[5] (հոդված 3), «Ավիացիայի մասին»[6] (հոդված 60) ՀՀ օրենքներով, այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում մաքսային վերահսկողության և ձևակերպումների բնագավառում բացակայում է միասնական իրավական ակտ, որով կհամախմբվեին բոլոր ենթաօրենսդրական ակտերը՝ հիմք ընդունելով EC 2454/93 կանոնակարգը[7] այսինքն՝ պետք է մշակել մեկ կանոնակարգ, որն իր մեջ կամփոփի կառավարական ու գերատեսչական բոլոր նորմատիվ ակտերը, մասնավորապես՝ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի և հարկային պետական ծառայության որոշումներն ու հրամանները և այլ իրավական ակտեր: Այդպիսի համախմբված կանոնակարգը կդյուրացներ մաքսային վերահսկողության և ձևակերպումների բնագավառի օրենսդրության և՛ կիրառումը, և՛ ըմբռնելիությունը[8]: Այս բնագավառի օրենսդրության մեջ մանրամասնորեն չեն նկարագրված մաքսային ռեժիմները, հատկապես «մաքսային պահեստ», «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «տարանցիկ փոխադրում» մաքսային ռեժիմները: Բացակայում է գրավի (երաշխիքի) կիրարկման ինստիտուտը: Բացակայում է մաքսատուրքի վճարման հետաձգման հնարավորությունը: ԵՄ օրենսդրության հետ ներդաշնակեցման շրջանակներում ՀՀ մաքսային օրենսդրությունում պետք է ամրագրվի մաքսային մարմինների կողմից կատարվելիք գործողությունների մասին գրավոր տեղեկություններ ստանալու ներմուծողի (արտահանողի) իրավունքը: Անհրաժեշտ է հայտարարագրման փուլում ապահովել ներկայացուցչական իրավունքը[9]: ԵՄ օրենսդրությունում ամրագրված են և լայնորեն կիրառվում են պարզեցված ընթացակարգերը[10]: ՀՀ օրենսդրության մեջ դրանք բացակայում են: Հայաստանի Հանրապետությունում բացակայում է մաքսատուրքով գանձման արտոնությունների մեխանիզմը[11]: ԵՄ-ում օրենքով սահմանված զենքի տեսակները ազատված են մաքսատուրքից[12]:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Մաքսային վերահսկողություն և ձևակերպումներ» ենթագլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

Որոշ տեսակի զենքի ներմուծման մաքսային խնդիրները կարգավորելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կիրականացվեն ՀՀ մաքսային օրենսգրքում, «Զենքի մասին» ՀՀ

---

[1] ՀՕ-83, 06.07.2000թ.:
[2] ՀՕ-246, 03.07.1998թ.:
[3] ՀՕ-85, 28.07.2000թ.
[4] ՀՕ-250, 24.10.2001թ.:
[5] ՀՕ-135-Ն, 24.11.2004թ.:
[6] ՀՕ-327, 20.05.2002թ.:
[7] Մաքսային գործունեությունների մասին ԵՄ ենթաօրենսդրական ակտերը համախմբված են Եվրոպական հանձնաժողովի EC 2454/93 «Կիրարկման կանոնակարգում», տե՛ս Խորհրդի 2913/92 կանոնակարգի դրույթների իրականացման համար Խորհրդի 1993թ. հուլիսի 2-ի թիվ 2454 կանոնակարգ:
[8] 1992թ. հոկտեմբերի 19-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2913/92՝ «Համայնքի մաքսային օրենսգիրքը հաստատելու մասին»:
[9] 1992թ. հոկտեմբերի 19-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2913/92՝ «Համայնքի մաքսային օրենսգիրքը հաստատելու մասին» (հոդ. 5):
[10] 1993թ. հուլիսի 2-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2454՝ «Խորհրդի 2913/92 կանոնակարգի դրույթների իրականացման համար» (հոդ.253-267):
[11] 1983թ. մարտի 28-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 918/83՝ «Համայնքի՝ մաքսային վճարներից ազատման համակարգի ստեղծման մասին»:
[12] 2003թ հունվարի 21-ի Եվրոպական խորհրդի կանոնակարգ թիվ 150/2003՝ «Որոշ զենքերի և ռազմական սարքավորումների ներմուծման մաքսատուրքերից ազատելու մասին»:

օրենքում և «ՀՀ մաքսային սահմանով ռազմական տեխնիկայի և մարտական զենքի, զինամթերքի մասերի ու պարագաների տեղափոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ, որոնք կընդգրկեն ԵՀ 2003թ. հունվարի 21-ի թիվ 150/2003 կանոնակարգի հիմնական դրույթները:

ՀՀ կառավարությունը կմշակի որոշման նոր նախագիծ, որը միտված կլինի կարգավորելու այլ երկրներում գրանցված կամ շրջանառության մեջ գտնվող տրանսպորտային միջոցների վերահսկումը: Որոշման մշակման համար հիմք կհանդիսանա ԵՀ 1992թ. դեկտեմբերի 17-ի թիվ 3912/92 կանոնակարգը:

2008 թվական

ՀՀ մաքսային օրենսգիրքը ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն ՀՀ մաքսային օրենսգրքում: Այդ փոփոխությունները և լրացումները հիմնականում կլինեն համահունչ ԵՀ 1992թ. հոկտեմբերի 19-ի թիվ 2913/92, 918/83 և 2658/87 կանոնակարգերի սկզբունքներին:

2009 թվական

Մաքսային օրենսգրքի կիրարկումն ապահովելու նպատակով կմշակվի նոր օրենքի նախագիծ՝ ԵՀ 1998թ. հուլիսի 9-ի թիվ 2454/93 կանոնակարգի հիմնական դրույթներին համապատասխան:

1.1.Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	• «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Զենքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «2003թ. հուլիսի 31-ի «ՀՀ մաքսային սահմանով ռազմական տեխնիկայի և մարտական զենքի զինամթերքի մասերի ու պարագաների տեղափոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 960-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման հախագծի մշակում	2003 թ հունվարի 21-ի «Որոշ զենքերի և ռազմական սարքավորումների ներմուծման մաքսատուրքերից ազատելու մասին» Եվրոպական խորհրդի թիվ 150/2003 կանոնակարգ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ ԿԱ ոստիկանություն)	1-ին եռամսյակ	15	Նախնական փորձաքննություն

2.	«Այլ երկրներում գրանցված կամ շրջանառության մեջ գտնվող ճանապարհային և գետային տրանսպորտային միջոցների նկատմամբ հսկողության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1992 դեկտեմբերի 17-ի «Երրորդ երկրներում գրանցված կամ շրջանառության մեջ գտնվող ճանապարհային և գետային տրանսպորտային միջոցների նկատմամբ Համայնքներում հսկողության մասին» Եվրոպական խորհրդի թիվ 3912/92 կանոնակարգ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն)	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն,
ԸՆԴԱՄԵՆԸ					**30**	
2008						
3.	«ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1992թ. հոկտեմբերի 19-ի «Համայնքի մաքսային օրենսգիրքը հաստատելու մասին» Խորհրդի թիվ 2913/92 կանոնակարգ 1983թ. մարտի 28-ի «Հայայնքի՝ մաքսային վճարներից ազատման համակարգի ստեղծման մասին» Խորհրդի թիվ 918/83 կանոնակարգ 1987թ. հուլիսի 23-ի «Մաքսադրույքների և վիճակագրական անվանացանկի և միասնական մաքսային դրույքի մասին» խորհրդի թիվ 2658/87 կանոնակարգ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն)	1-ին եռամսյակ	381	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն,
ԸՆԴԱՄԵՆԸ					**381**	
2009						

4.	«ՀՀ մաքսային օրենսգրքի կիրարկման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1998թ. հուլիսի 9-ի «Խորհրդի թիվ 2313/92 կանոնակարգով սահմանված Համայնքի մաքսային օրենսգրքի կիրարկման դրույթները սահմանելու մասին» Հանձնաժողովի թիվ 2454/93 կանոնակարգ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե)	1-ին եռամսյակ	900	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**900**	

1.2.Ինստիտուցիոնալ կարողություններ[13]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ ԿԱ ոստիկանություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	-	Մաքսային սահմանով զենքի և զինամթերքի տեղափոխման վերաբերյալ դասընթացներ (3 օր / 2007թ.)	Նախնական փորձաքննություն, վերապատրաստում
2.	ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն	-	ԵՄ մաքսային օրենսգրքի վերաբերյալ դասընթաց (5 օր / 2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, վերապատրաստում
3.	ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն	-	ԵՄ մաքսային օրենսգրքի կիրարկման վերաբերյալ դասընթաց (5 օր / 2008թ)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, վերապատրաստում

[13] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

2 . Տվյալների փոխանակում

Ներածություն

ԵՄ շրջանակում տարբեր գերատեսչությունների միջև մաքսային բնագավառի գործունեության վերաբերյալ տեղեկությունների փոխանցման հիմնախնդիրը գերազանցապես վերաբերում է ԵՄ անդամ երկրներին և իր բնույթով կրում է վերջիններիս միջև ձևավորված փոխհարաբերությունների առանձնահատկությունները, ուստի Հայաստանի Հանրապետությունում նման նորմատիվ իրավական ակտ գոյություն չունի[14]:

Ինչ վերաբերում է կենդանիների ներկրման հաշվառմանը, ապա պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում չի օգտագործվում համակարգչային տվյալների բազա կենդանիների ներկրման հաշվառման համար, չնայած ՀՀ կառավարության 2004թ. հունվարի 29-ի թիվ 59-Ն որոշումը ենթադրում է կենդանիների ներքին տեղաշարժի հաշվառում[15]:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Տվյալների փոխանակում» ենթագլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2009 թվական

Մաքսային օրենսգրքի կիրարկման ժամանակ գյուղատնտեսական խնդիրների արդյունավետ լուծման համատեքստում տարբեր գերատեսչությունների համագործակցությունը կանոնակարգելու նպատակով ՀՀ կառավարությունը կմշակի որոշման նախագիծ՝ հիմք ընդունելով ԵՀ 1997թ. մարտի 13-ի թիվ 515/97 կանոնակարգի հիմնադրույթները:

---

[14] 1997թ. մարտի 13-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 515/97՝ «Մաքսային և գյուղատնտեսական հարցերում օրենքի ստույգ կիրառման համար անդամ պետությունների վարչական մարմինների միջև փոխադարձ օգնության ու վերջիններիս և Եվրոպական հանձնաժողովի միջև համագործակցության մասին»:

[15] 1992թ. հուլիսի 13-ի Խորհրդի որոշում (Shift ծրագիր)՝ «Ներմուծման ժամանակ անասնաբուժական ընթացակարգերի համակարգչայնացման մասին»:

2.1.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2009						
1.	«ՀՀ մաքսային օրենսգրքի կիրարկման ընթացքում գյուղատնտեսական խնդիրների լուծման նպատակով ՀՀ տարբեր գերատեսչությունների միջև փոխադարձ օգնության և համագործակցության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1997թ. մարտի 13-ի «Մաքսային և գյուղատնտեսական հարցերում օրենքի ստույգ կիրառման համար անդամ պետությունների վարչական մարմինների միջև փոխադարձ օգնության ու վերջիններիս և Եվրոպական հանձնաժողովի միջև համագործակցության մասին» Խորհրդի թիվ 515/97 կանոնակարգ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն և խնդրին առնչվող պետական այլ մարմինների հետ համատեղ)	1-ին եռամսյակ	33	Նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					33	

2.1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[16]

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն Պետական այլ մարմիններ	-	ԵՄ-ում մաքսային օրենսգրքի կիրարկման և գյուղատնտեսության խնդիրների արդյունավետ լուծման նպատակով գերատեսչական մարմինների համագործակցության վերաբերյալ դասընթացներ (2 օր / 2009թ.)	Նախնական փորձաքննություն, վերապատրաստում

[16] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

3. Հատուկ սխեմաներ

Ներածություն

Հատուկ սխեմաների բնագավառում ՀՀ օրենսդրությունն իմաստային առումով ընդհանուր առմամբ համապատասխանում է ԵՄ օրենսդրությանը:

Հատուկ սխեմաներին վերաբերող Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է համայնքի տարածք թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ներկրման հետ կապված հարցերը և մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությանն առնչվող որոշ հիմնախնդիրներ: Վերոհիշյալ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են ՀՀ մաքսային օրենսգրքով[17] (հոդ.86, 189-204, 227-233), «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին»[18], «Լիցենզավորման մասին»[19] (հոդված 23), «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»[20] (հոդված 4), «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին»[21] (հոդված 4), «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին»[22] (հոդված 14) ՀՀ օրենքներով, այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ՀՀ կառավարության կողմից ՀՀ ներկրվող հոգեմետ դեղերի ցանկը տարբերվում է ԵՄ ցանկից[23]: ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է մինչև իրավատիրոջը տեղեկացնելը ենթադրվող խախտման մասին գործին առնչվող իրեն մատչելի տեղեկատվությամբ մաքսային մարմիններին ապահովելու վերաբերյալ պահանջը: ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում էլեկտրոնային դիմումի հնարավորություն: Ի տարբերություն ԵՄ օրենսդրության՝ Հայաստանի Հանրապետությունում 7-օրյա ժամկետում է տեղեկացվում հայտատուն: Ի տարբերություն ԵՄ օրենսդրության՝ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է պետական տուրքի վճարում: Հայաստանի Հանրապետությունում բացակայում է թմրամիջոցների շուկայի օպերատորի հասկացությունը: ԵՄ-ում լիցենզիայի տրամադրման գործընթացն ավելի մանրամասն է նկարագրված: Հայաստանի Հանրապետությունում տարբերվում են հոգեմետ նյութերի ներկրման և արտահանման փաստաթղթերի լրացման կարգը, ինչպես նաև հոգեմետ նյութերի պիտակավորման գործընթացը: ՀՀ օրենսդրությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար պատժի կիրառման սկզբունքները լրացման կարիք ունեն: ՀՀ օրենսդրությունում բացակայում է սեփականության իրավունքը խախտող ապրանքի սահմանումը[24]:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Հատուկ սխեմաներ» ենթագլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ներկրման հետ կապված հիմնախնդիրների կարգավորումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներում՝ համապատասխանեցնելով դրանք 2004թ. փետրվարի 11-ի թիվ 273 և 1990թ. դեկտեմբերի 13-ի թիվ 3677 կանոնակարգերի դրույթներին:

2008 թվական

Մաքսային վերահսկողության համատեքստում մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության համար փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին», «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքներում, ինչպես նաև «ՀՀ մաքսային մարմինների կողմից մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանությանն օժանդակելու կարգը հաստատելու մասին» ՀՀ հարկային պետական ծառայության հրամանում: Նշված փոփոխությունները և լրացումները կիրականացվեն՝ հիմք ընդունելով ԵՀ 2003թ. հուլիսի 22-ի թիվ 1383 կանոնակարգի հիմնական սկզբունքները:

---

[17] ՀՕ-83, 06.07.2000թ.:
[18] ՀՕ- 518, 26.12.2002թ.:
[19] ՀՕ-193, 30.05.2001թ.:
[20] ՀՕ-28, 08.12.1999թ.:
[21] ՀՕ-41, 20.03.2000թ.:
[22] ՀՕ-23, 23.11.1999թ.:
[23] 2004թ. փետրվարի 11-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կանոնակարգ թիվ 273/2004՝ «Թմրանյութերի մասին», 1990թ. դեկտեմբերի 13-ի կանոնակարգ թիվ 3677/90՝ «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի արտադրությանն ուղղված նյութերի տարածման դեմ միջոցառումների մասին»:
[24] 2003թ. հուլիսի 22-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1383/2003՝ «Մտավոր սեփականության որոշ իրավունքներ խախտող ապրանքների դեմ ուղղված մաքսային գործողությունների և այդ ապրանքների նկատմամբ միջոցառումների մասին»:

3.1.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	• «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2004թ փետրվարի 11-ի «Թմրանյութերի մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 273/2004 կանոնակարգ 1990թ. դեկտեմբերի 13-ի «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի արտադրությանն ուղղված նյութերի տարածման դեմ միջոցառումների մասին» թիվ 3677/90 կանոնակարգ	ՀՀ առողջապահության նախարարություն (ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի հետ համատեղ)	2-րդ եռամսյակ	36	Նախնական փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		36	
			2008			
2.	• «2000թ. դեկտեմբերի 5-ի «ՀՀ մաքսային մարմինների կողմից մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանությանն օժանդակելու կարգը հաստատելու մասին» ՀՀ հարկային պետական ծառայության N 02/1507 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ հարկային պետական ծառայության որոշման նախագծի մշակում • «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Ապրանքային և սպասարկման	2003թ հուլիսի 22-ի «Մտավոր սեփականության որոշ իրավունքների խախտող ապրանքների դեմ ուղղված մաքսային գործողությունների և այդ ապրանքների նկատմամբ միջոցառումների մասին» Խորհրդի թիվ 1383/2003 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե)	4-րդ եռամսյակ	15	Նախնական փորձաքննություն,

	նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում					
ԸՆԴԱՄԵՆԸ					15	

3.1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[25]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե	-	ԵՄ-ում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի արտադրության և տեղափոխման վերահսկման վերաբերյալ դասընթացներ (5 օր / 2007թ.)	Նախնական փորձաքննություն, վերապատրաստում
2.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե	-	ԵՄ-ում մտավոր սեփականության իրավունքներ խախտող ապրանքների դեմ ուղղված միջոցառումների վերաբերյալ դասընթացներ (3 օր / 2008թ.)	Նախնական փորձաքննություն, վերապատրաստում

[25] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ